

ՎԱՐՔԵՐԸ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐ
LIVES AS HISTORICAL SOURCES
ЖИТИЯ КАК ИСТОРИЧЕСКИЙ ИСТОЧНИК

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ*

DOI:10.57155/UHNN8498

Ե-Է ԴԱՐԵՐԻ ՀՈՒՆԱՐԵՆ ՎԱՐՔԱԳՐԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր՝ Վարք սրբոց, վարքաբանություն, սրբախոսություն, վանականություն, հայ վանականներ, Փոքր Հայք, Թեոդորիտոս Կյուրացի, սուրբ Գրիգենտիոս, Խոր վիրապ, Հովհան Ոսկեբերան, Ան-ձեռագործ Դաստառակ:

Հայոց պատմության համար հայրենական սկզբնաղբյուրների կողքին առանձնահատուկ նշանակություն ունեն օտար աղբյուրները, որոնք ուսումնասիրողներին կարող են եզակի տեղեկություններ ընծայել: Վարքագրական մատենագրությունն այս առումով անգնահատելի սկզբնաղբյուրներ ունի, որոնք արժեքավոր վկայություններ են պարունակում¹: Սույն հրապարակմամբ առանձնացրել ենք հինգ վարքագրական հուշարձան՝ բոլորն էլ հունարենով:

* Աստվածաբանության դոկտոր, Աթենքի ազգային համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի հետդոկտորական հետազոտող, Աթենքի ազգային համալսարանի Օտար լեզուների կենտրոնում Հայոց լեզվի դասախոս, հոդվածը ստանալու օրը՝ 22 մարտի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 31 մայիսի, 2025:

¹ Տասնամյակներ առաջ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» շարժում մի փառի գրքով լույս տեսան բյուզանդական պատմագրական երկեր՝ պրոֆ. Հրաչ Բարթիկյանի աշխատասիրությամբ: Բացի դրանից, վաստակաշատ պրոֆեսորն իր մի փառի հոդվածներում անդրադարձ է ունեցել հունարեն վարքագրական հուշարձաններին, որոնք առնչվում էին հայերին. տե՛ս **Հ. Մ. Բարթիկյան**, «Մամիկոնյան (") սուրբ Մարիամ Նորավկայի (+902/903 թթ.) բյուզանդական Վարքը», *Էջմիածին*, 1975, ժԲ, էջ 39-46, 1976, Ա, էջ 42-49, Բ, էջ 52-57, **Հ. Մ. Բարթիկյան**, «Հայ-բյուզանդական նոթեր», *Տեղեկագիր*, 1960, 7-8, էջ 129-138, **Հ. Բարթիկյան**, Քրիստոնեությունը Փոքր Հայքում. ազգային-կրոնական և սոցիալ-ֆաղափական իրավիճակը նահանգում III դարի երկրորդ կեսին (ըստ IV դարի սրբոց վկայաբանությանց), *ՊԲՀ*, 2001, №2, էջ 3-43: Մեր կարծիքով՝ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» վերադասությամբ հատորները շարունակելու դեպքում դրանց մեջ անպայման պետք է ընդգրկել նաև վարքագրական հուշարձանները:

Դրանք թվագրվում են Ե-է դարերում՝ պատկանելով վաղմիջնադարյան շրջանին, ինչն առավել է մեծացնում դրանց արժեքը:

Կալլինիկոս, «Վարժ մեռ սուրբ հայր Հյուպատիոսի² ու Ռուֆինիանեում է»³ (Βίος τοῦ ὁσίου πατρὸς ἡμῶν Ὑπατίου τοῦ ἐν Ρουφινιανῆς): Այս գրական հուշարձանի գլխավոր հերոսը ծնվել է 366 թ., Փոքր Ասիայի Փոչուզիա նահանգում, մահացել՝ 446 թ.: Սրբի մահվանից մի քանի տարի անց՝ մոտավորապես 450 թ., նրա աշակերտն ու վանահոր պաշտոնում հաջորդը՝ Կալլինիկոսը, ձեռնարկել է իր ուսուցչի վարքը շարադրելուն: Փոքր-ինչ ուշ «Հյուպատիոսի վարքը» ենթարկվել է զուտ բանասիրական մշակման՝ անխաթար պահելով բովանդակությունը: Այսպիսով, մեր առջև Ե դ. կեսերի մեծարժեք, «առաջին ձեռքից» հասած մի երկ է, որտեղ ի շարս այլ տեղեկությունների⁴, եզակի վկայություններ են պահպանվել ս. Հյուպատիոսի հոգևոր հոր՝ հայագգի աբբա Հովնանի⁵ մասին: Վերջինս եղել է զինվորական, որը ծառայել է Կոստանդնուպոլսում, ապա հրաժարվել է զինվորական ասպարեզից՝ նվիրվելով ճգնակեցությանը: Հյուպատիոսը, փախչելով իր հոր խստությունից, Փոչուզիայից գալիս է Թրակիա և որոշ ժամանակ զբաղվում խաշնարածությունամբ, իսկ հետո որպես սաղմոսերգու ծառայում է մի եկեղեցում: Ահա այս ժամանակ է, որ նա հանդիպում է իր ապագա հոգևոր հորը՝ Հովնանին: Կալլինիկոսն ավանդում է. «Երբ նա տրտմած էր ու խնդրում էր Աստծուն, որպեսզի արժանացնի բնակվել բարեպաշտների հետ, երբ նա աղոթում էր, Աստված տնօրինեց, որ Կոստանդնուպոլսում մի զինվորական՝ Հովնան անունով, ազգությունամբ հայ, Աստծուց խոցված՝ հրաժարվի աշխարհից: Այս Հովնանը բազում անգամներ խնդրել էր նուներոսի տրիբունին⁶,

² Գերադասել ենք անվան անտիկ արտասանությունը, քանի որ հայերենում արդեն տարածված են նույնաբան «հյուպատոս» ու «հյուպատոսություն» բառերը: Բյուզանդական և արդի հունարեն արտասանությամբ՝ «Իպատիոս»:

³ Callinicos, *Vie d'Hypatios*, Introduction, Texte critique, Traduction en notes par G. J. M. Bartelink (Sources Chrétiennes 177), 1971 (այսուհետ՝ Callinicos, *Vie d'Hypatios*).

⁴ «Հյուպատիոսի վարքը» կարելի է ուշ անտիկ շրջանի մի յուրահատուկ համադրվածության համարել, որտեղ ուսումնասիրողը կարող է տվյալներ փնտել ամենատարբեր ոլորտներից՝ կրոնական հավատալիքներ, բժշկագիտություն, եկղյց. պատմություն, հարտաբաղնություն, հասարակական կապեր ևն:

⁵ Սա հայոց մեջ «Հովնան» անվան կիրառման ամենավաղ դեպքն է, քանի որ նույնանուն մեկ այլ երեց հայտնի է որպես 444 թ. Շահապիվանի ժողովի մասնակից (տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, Երևան, 1946, հ. Գ, էջ 707):

⁶ Τὸν τριβούνον τοῦ νουμέρου. Numerus էին կոչվում հռոմեական բանակի այլևայլ ջոկատներ. տե՛ս P. Southern, "The Numeri of the Roman Imperial Army," *Britannia*, vol. 20 (1989), pp. 81-140:

սակայն, ազատ չարձակվելով [զինվորական ծառայությունից], մի օր ուսերին դնելով մի փոքրիկ կապոց⁷, ձեռքին էլ՝ հուր, երբ ամենաբարեպաշտ արքա Արկադիոսն⁸ անցնում էր, մոտենալով նրան, ասաց.

– Յարդ ծառա եղա քո տերությունը, [բայց] սրանից հետո ցանկանում եմ Քրիստոսին ծառայել: Հրաման տուր ազատ արձակել ինձ: Իսկ եթե ոչ, ապա իշխանություն ունես սրանցով վառել ինձ, քանզի ես ուրիշ ոչինչ չեմ կարող անել:

Իսկ արքան, տեսնելով նրա բարեպաշտ մտադրությունը, անմիջապես հրամայեց նրան ազատ արձակել: Եվ իսկույն նա դուրս եկավ քաղաքից և, ելնելով, իր համար խրճիթ խփեց այն սարի վրա, որը շատ հեռու չէր այն եկեղեցուց, որտեղ էր Աստծո ծառան⁹: Եվ, մնալով տաղավարի մեջ, բույսերով էր ապրում: Իսկ շրջակայի գյուղացիները, իմանալով, բարձրացան, նրա համար խուց կառուցեցին և մի փոքրիկ հողակտոր ցանեցին: Եվ երբ նա սաղմոսերգում էր, աղոթում, պահք պահում ու ճգնում միայնակյացի բոլոր առաքինություններով, քանզի դրանցում փորձառու էր՝ սովորած լինելով իր հայրենիքում¹⁰ – որովհետև հայերը հույժ նվիրված են Աստծուն¹¹ – մեկ առ մեկ սկսեցին հարել նրան՝ Աստծուն ծառայելու համար¹²:

Քսանամյա Հյուպատիոսը գալիս է Հովնանի մոտ, և վերջինս նրան ընդունում է իր աշակերտների թվում: Հյուպատիոսը դառնում է Հովնանի նվիրյալ աշակերտը և հենց նա է, որ ապագայի վարքագրին տեղեկություններ է հաղոր-

⁷ Φορτίον՝ բեռ: Հավանաբար, փայտի կապոց, որով Հովնանը առաջարկում էր այրել իրեն:

⁸ Մեծն Թեոդոս Ա. կայսեր (379-395 թթ.) կրտսեր որդին: 395 թ.՝ հոր մահվանից հետո, Արկադիոսն ու նրա ավագ եղբայր Հոնորիոսը իրար մեջ կիսեցին Հռոմեական կայսրությունը. Հոնորիոսը թագավորեց դրա արևմտյան հատվածում, իսկ Արկադիոսը դարձավ արևելյան հատվածի առաջին կայսրը մինչև իր վախճանը 408 թ.: Հովնանի հետ դեպքը կատարվել է 386 թ., երբ Թեոդոսը գահակից կայսր էր հոր ու եղբոր հետ:

⁹ Այսինքն՝ Հյուպատիոսը:

¹⁰ Մեր ազգային մատենագրությունից հայտնի է, որ վանականությունը Հայոց մեջ ծաղկում է ապրել Մեծն Ներսեսի օրերից սկսած՝ իր սաղմնային վիճակի մեջ վկայված լինելով ավելի վաղ շրջանում (տե՛ս **Յուսիկ եպս Տե-Մովսիսեան, Անապատականներ և վանականություն** (Արտատպված Արարատ ամսագրից), Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի, 1906, Լ. **Թումանյան, Վանականության կանոնները և ծիսակարգերը հայոց մեջ**, գիրք Ա, Երևան, 2023):

¹¹ Οἱ γὰρ Ἀρμένιοι σφόδρα πρόσκεινται τῷ Θεῷ: Πρόσκειμαι բայը բազմիմաստ է, նշանակում է «նվիրված լինել», «համառելով խնդրել», «պատկանել», «հավելվել» ևն:

¹² **Callinicos, Vie d'Hypatios**, էջ 80, 82: Կոստանդնուպոլսում այդ ժամանակ կար մեկ վանք՝ ս. Իսահակի հիմնած, իսկ Թրակիայի հոգևոր կյանքը ցածր մակարդակի էր, այնպես որ Հովնանը, ճգնակեցության փորձն իր հետ բերելով Հայքից, այստեղ ըստ էության դառնում է վանական կյանքի հիմնադիրներից մեկը: Կոստանդնուպոլսի վաղ շրջանի վանական հաստատությունների մասին տե՛ս **P. Hatlie, The Monks and Monasteries of Constantinople, ca. 350-850**, Cambridge University press, 2007:

դել հայ սրբի մասին: Հետզհետե միաբանության թիվն ավելանում է, և մի ամբողջ վանք է գոյանում. «Արդ, — շարունակում է վարքագիրը, — երբ ուրիշներ ևս հարեցին նրանց, սկսեցին ջանադրաբար մշակել թե՛ այգի, թե՛ հողակտոր՝ ցանելու ու վանքը մեծացնելու համար, այնպես որ հավաքվեցին ութսուն եղբայրներ և մի մեծ ամրոց»¹³ դարձավ: Քանզի հոների հարևանության և այդ տեղերը հեշտությամբ թալանելու պատճառով ամրոցներ էին կառուցում: Արդ, բոլորին առաջնորդում էր սուրբ վարդապետ Հովնանը»¹⁴: Նրա վանքն ստանում է «Ալմիռոսոս»¹⁵ անվանումը:

«Հյուպատիոսի Վարքի» գրվագներից մեկում պատմվում է այն մասին, որ երիտասարդ Հյուպատիոսի հոգևոր սխրանքներից մեկն է լինում հիվանդախնամությունը. Հովնանի օրհնությամբ նա դուրս էր գալիս վանքից և, որևէ անխնամ հիվանդ, օգնության կարիքն ունեցող մարդ տեսնելով, իր ուսերի վրա դրած՝ բերում էր վանք, որտեղ և ըստ հարկի խնամում էր: Եթե պետք էր լինում, հիվանդին օծում էր օրհնված յուզով աբբան՝ Հովնանը, քանի որ նա արդեն քահանայական աստիճանն ուներ¹⁶: Հետաքրքրական է, որ տարիքի, հետևապես՝ կենսափորձի պատճառով Հյուպատիոսն ու Հովնանը տարբեր բնութագիր ունեին. եթե աբբան հոգևոր կյանքում փորձառու, ուստի և չափավորված մեկն էր, ապա նրա սկսնակ աշակերտը հակված էր չափազանցությունների: Այսպես, վարքագիրը պատմում է, որ մի շրջան երիտասարդ Հյուպատիոսը տառապում էր մարմնական (սեռական) պայքարից: Արդյունքում նա հիստուն օր ոչինչ չի խմում այն աստիճան, որ շրթունքները ճաքում են: Տեսնելով նրա վիճակը՝ վանականները տեղեկացնում են արքիմանդրիտին¹⁷ Հովնանին:

«Իսկ Հովնանը, գիշերային աղոթասացությունից դադարելով, մի բաժակ գինի լցնելով, հացի հետ, բոլորի ներկայությամբ կանչեց նրան.

— Հյուպատիոս:

Իսկ նա պատասխանեց.

— Օրհնյա՛:

[Հովնանն] ասաց նրան.

— Մեջտե՛ղ արի ու վերցնելով խմի՛ր այս օրհնությունը:

Քանի որ [Հյուպատիոսը] գինի բնավ չէր խմում:

¹³ Καστέλλιον՝ փոքր ամրոց, ամրություն, բերդ: Միջնադարյան վանքերը, որպես կանոն, ունեին պարիսպներ՝ ոչ միայն վանականների, այլև պատերազմի ժամանակ այնտեղ ապաստանած բնակչության պաշտպանության համար:

¹⁴ Callinicos, *Vie d'Hypatios*, էջ 82, 84:

¹⁵ Ἀλμύρισσος, անտիկ արտաբերմամբ՝ «Հալմյուռիսոս»:

¹⁶ Callinicos, *Vie d'Hypatios*, էջ 86:

¹⁷ Ἀρχιμανδρίτης բոց. «փարախապետ»: Հնում նշանակել է «վանահայր», այժմ տրվում է որպես տիտղոս կուսակրոն ֆանաաներին:

Իսկ նա, հայրական տրամադրությունից զգացված և, իմանալով, որ հնազանդությունը կյանք է, հավատով ընդունելով խմեց, և պաշարն ավելի տանելի դարձավ»¹⁸:

Որոշ ժամանակ անց Թրակիան ենթարկվում է հոների հարձակմանը, և Ալմիռիսոսի վանքը կարողանում է պաշտպանվել: «Երբ հրո դադար եղավ, գյուղացիները, թալանված լինելով ու այլևս ոչինչ չունենալով, վանք էին շտապում՝ խնդրելով անհրաժեշտ բաները: Իսկ տեր Հովնանը, մտնելով մեծ քաղաքը¹⁹, համարձակությամբ ասում էր իլլուստրիոսներին²⁰.

— Թրակիայում թալանված աղքատները քաղցած են ու անհանգստացնում են ինձ: Պարեն ուղարկեք նրանց»:

Մեծահարուստները կատարում են սրբի պահանջը՝ նավերով ցորեն ու ընդեղեն ուղարկելով: Ավելին՝ խնդրում են նրան օրհնել իրենց ընտանիքները. «Քաղաք մտնելուն պես բոլոր հարուստները խնդրում էին նրան, որպեսզի, աղոթք անելով իրենց տանը, օրհնի իրենց: Նա այնպես նախանձախնդիր էր, որ բոլոր իլլուստրիոսներին ղեմառղեմ հանդիմանում էր: Եթե գտներ, որ որևէ մեկին զրկում էին, մինչև մահ պաշտպանում էր զրկվողին, միաժամանակ և խրատում էր նրանց՝ ասելով. «Զրկվողների արցունքները զրկողների դատաստանն են դառնում»: Իսկ օգուտ քաղածները նրան պատվում էին որպես Աստծո ճշմարիտ ծառայի, միևնույն ժամանակ զարմանում էին որ, անգրագետ ու հասարակ մեկը լինելով հանդերձ, այդպիսի շնորհ էր ստացել Տիրոջից»²¹:

Հովնանի ու Հյուպատիոսի ուղիները բաժանվում են, երբ Ալմիռիսոսի վանք է գալիս վերջինիս զառամյալ հայրը, որի հետ Հյուպատիոսը գնում է Կոստանդնուպոլսի մի արվարձան: Ինչ-որ ժամանակ հոր հետ ապրելով և նրան հետ ուղարկելով գյուղ՝ նա ծանոթանում է երկու այլ վանականների՝ Տիմոթեոսի ու Մոսքիոնի հետ: Այս եռյակը Քաղկեդոնի արևելքում մի լքված վանք է գտնում, որը կառուցել էր ոմն Ռուֆինոս: Այստեղ հաստատվելով եղբայրները շարունակում են իրենց ճգնակեցությունը: Շուտով սակայն, Հյուպատիոսի ու Տիմոթեոսի միջև գժտություն է առաջանում, և առաջինը, լքելով Ռուֆինոսի վանքը, գտնում է ալմիռիսոսցի մի վանականի ու նրա հետ հեռանում Թրակիա: Վերառադնալով աբբա Հովնանի մոտ՝ Հյուպատիոսն իր համար մի խուց է խնդրում²²: Այդ ընթացքում Տիմոթեոսն ու մնացյալ եղբայրները փնտրում են նրան: Երբ Հովնա-

¹⁸ Callinicos, *Vie d'Hypatios*, էջ 90, 92:

¹⁹ Իմա՝ Կոստանդնուպոլիս:

²⁰ Ἰλλούστριος. այսպես էին կոչվում սեմատորները ու Հռոմեական կայսրությունում (տե՛ս *The Oxford Dictionary of Byzantium*, Oxford University Press, New York and Oxford, 1991, էջ 986-987):

²¹ Callinicos, *Vie d'Hypatios*, էջ 92, 94:

²² Callinicos, *Vie d'Hypatios*, էջ 106:

նը Կոստանդնուպոլիս է ժամանում, նրանք գալիս են աբբայի մոտ և աղերսում, որ համոզի Հյուպատիոսին վերադառնալ իրենց մոտ: Հենց այս ժամանակ Հովնանը ծանր հիվանդանում է և երազում տեսնում է մեկին, որն իրեն ասում է. «Եթե Հյուպատիոսը չգա, չես առողջանա»: Թրակիայում գտնվող Հյուպատիոսն ու նրա ուղեկից վանականը ևս տեսիլքով իմանում են Աստծո կամքը: Երբ Հյուպատիոսը Հովնանի կանչով գալիս է մայրաքաղաք, գտնում է նրան շատ ծանր վիճակում. «Արդ, երբ եկան տեր Հովնանի մոտ, տեսան, որ նա ծանր վիճակում է ու գրեթե չի կարողանում խոսել: Հյուպատիոսը, դիպչելով նրան ու աղոթք անելով, սնունդ տվեց նրան, և նա իսկույն ավելի լավացավ, քանի որ շատ օրեր ոչինչ չէր ճաշակել: Եվ մի քանի օր անց ավելի ապաքինվելով՝ խնդրեց աբբա Հյուպատիոսին, որպեսզի գնա Ռուֆինիաների եղբայրների մոտ: Տիմոթեոսին էլ կանչելով՝ հորդորեց նրանց՝ ասելով. «Մի՛ զարմացեք, սուրբ առաքյալների միջև էլ էր գոտուկություն լինում»»²³:

Այսպիսով, Հովնանի միջնորդությամբ Հյուպատիոսը հաստատվում է Ռուֆինիաների վանքի վանահայր: Ըստ վարքագրի՝ այդ ժամանակ նա 40 տարեկան էր, այսինքն՝ իրադարձությունը տեղի է ունեցել մոտավորապես 406 թ.:

Կալլինիկոսը Հովնանի մասին ևս մեկ այլ ուշագրավ տեղեկություն է հաղորդում. ըստ նրա՝ Հյուպատիոսն «Աստծո նախանձախնդրությունն ուներ և շատ վայրեր Բյութանացվոց աշխարհում կուռքերի մոլորությունից հնազանդեցրեց»²⁴: Քանզի եթե լսեր, որ ոմանք որևէ տեղ ծառ կամ նման մի բան են երկրպագում, անմիջապես գնում էր այնտեղ, վերցնելով իր հետ միանձնացող աշակերտներին, ու կտրելով, հրով վառում էր: Եվ այսպես տեղառտեղ քրիստոնյա էին դառնում: Քանզի և տեր Հովնանը՝ նրա հայրը, այսպես էր հնազանդեցրել Թրակիան և մարդկանց քրիստոնյա դարձրել»²⁵:

Սրանով, փաստորեն, հայտնի է դառնում, որ աբբա Հովնանը չի սահմանափակվել սոսկ ճգնափեցությունում, այլ Թրակիայում ակտիվորեն քրիստոնեություն է տարածել՝ ըստ էության դառնալով երկրամասի լուսավորիչը: Ցավոք, Կալլինիկոսը Հովնանի մասին այլ տեղեկություններ այլևս չի հայտնում՝ պատումն արդեն ամբողջությամբ նվիրելով Հյուպատիոսի հետագա կյանքին ու գործունեությանը: Աբբա Հովնանի վախճանը պիտի որ տեղի ունեցած լինի Ե. դ. առաջին քառորդում:

²³ Callinicos, *Vie d'Hypatios*, էջ 110: Հմմտ. Գործք ԺԵ, 39:

²⁴ Ἡμέρωσεν. ἡμερώω բայը նշանակում է «զապել», «հանդարտեցնել», «ընտանի դարձնել» (վայրի կենդանիներին):

²⁵ Callinicos, *Vie d'Hypatios*, էջ 200:

Թեոդորիտոս Կյուրացի, «Աստվածասեր պատմություն» (Θεόφιλος Ἱστορία): Ե դ. ականավոր մատենագիրներից է Թեոդորիտոս Կյուրացին: Նա ծնվել է շուրջ 393 թ. Անտիոքում, ստացել փայլուն կրթություն: Թեոդորիտոսն իր հոգևոր դաստիարակությունն ստացել է Անտիոքի սրբակյաց ճգնավորների շրջապատում, ինչի արդյունքում էլ իր անձը նվիրել է եկեղեցու ծառայությանը: Ձեռնադրվել է Փոքր Ասիայի Կյուրոս քաղաքի եպիսկոպոս: Լինելով անտիոքյան աստվածաբանական դպրոցի կարկառուն ներկայացուցիչ՝ Թեոդորիտոսը Կյուրեղ Ալեքսանդրացու և Նեստոր Կոստանդնուպոլսեցու քրիստոսաբանական վեճում անցել է վերջինիս կողմը: 431 թ. եփեսոսի Տիեզերածողովից հետո մեղմացրել է իր դիրքերը՝ ընդունելով Կյուրեղի և Հովհան Անտիոքացու ստորագրած «Սահման հաշտության»-ը: Դրանից հետո Թեոդորիտոսն զբաղվել է միաբնակության առաջնորդ եվտիքեսի մոլորության բուռն քննադատությամբ: Մասնակցել է 451 թ. Փաղկեդոնի Տիեզերածողովին՝ միայն այն բանից հետո, երբ ժողովի պահանջով նզովել է Նեստորին: Որպես ազդեցիկ եկեղեցական գործիչ՝ Թեոդորիտոսը նեցուկ է կանգնել կրակապաշտ պարսիկներից հալածվող հայերին. պահպանվել են նրա երկու նամակները՝ Վարդանանց պատերազմի օրերին ուղղված եվսեբիոս (Գյուլ) և Եվլալիոս պարսկահայոց եպիսկոպոսներին²⁶:

Թեոդորիտոս Կյուրացու բազմաժանր երկերի մեջ (վարդապետական, հակաճառական-չատագովական, մեկնողական, պատմագրական, թղթեր) առանձնահատուկ տեղ է գրավում «Աստվածասեր պատմություն» վարքագրական ժողովածուն, որով նա փորձել է ի մի բերել Անտիոքի, Վերին Ասորիքի, Միջագետքի, Կիլիկիայի, Օսրոյենների ու հարակից շրջանների ամենահայտնի ճգնավորների կենսագրությունները: Գիրքը բաժանված է երեսուն գլուխների, որոնցում Կյուրոսի եպիսկոպոսը շարադրել է երեսունվեց այր և կին ճգնավորների վարքերը²⁷: Դրանցից առաջին քսան գլուխների հերոսներն արդեն վախճանված էին երկի գրության պահին, իսկ մնացյալը դեռևս ողջ էին²⁸: Ժամանակագրական

²⁶ Թեոդորիտոսի այս երկու նամակները թարգմանված ու ներածականով հանդերձ հրատարակել է հայր Պողոս Անանյանը. տե՛ս Պողոս Բ. Անանեան, «Թեոդորեոս Կյուրացի եպիսկոպոսին երկու նամակները ուղղումը պարսկահայ եսեբիոս եւ Եղաղ եպիսկոպոսներուն», *Բազմավէպ*, 1986, 1-4, էջ 7-20: Ինչպես տեղեկացնում է Բ. Պողոսը նշված հոդվածում, զբաբարով պահպանվել է Թեոդորիտոսի «Եզեկիելի մեկնությունը»՝ վերագրված Կյուրեղ Ալեքսանդրացուն:

²⁷ Մրանցից հայագիտության համար առանձնահատուկ կարևորություն ունի Մծբինի եպիսկոպոս Հակոբոսի վարբը, որը համեմատելի է Փավստոս Բուզանդի երկում անթելված նույն սրբի մասին պատումի հետ:

²⁸ «Աստուածասեր պատմության» գլուխներից մեկը նվիրված է Մարկիանոսին: Այստեղ Թեոդորիտոսը պատմում է մի շատ ուշագրավ դրվագ. «Մեկ այլ անգամ, երբ մեծն Մարկիանոսը բակում աղոթում էր, մի վիշապ, դեպի արևելք շրջված պատին սողալով, պատի վերևից կախ-

առումով երկն ընդգրկում է Դ դարասկզբից մինչև դրա գրություն պահճը՝ Ե դարի կեսերը ընկած հատվածը:

«Աստվածասեր պատմություն» Ե գլխում Թեոդորիտոսը պատմում է Վերին Միջագետքի Զեզմա²⁹ բնակավայրի մոտակա վանքի հիմնադիր Պուբլիոսի մասին: Նրա հիմնադրած վանքի եղբայրությունը բաժանված էր ասորախոսների և հունախոսների, ինչի պատճառով էլ եկեղեցում առավուտյան ու երեկոյան ժամերգություններն ասվում էին զույգ լեզուներով, փոխնիփոխ: Այդ կարգը, ըստ Թեոդորիտոսի, պահպանվում էր ընդհուպ մինչև իր օրերը:

Պուբլիոսի մահվանից հետո վանքի հունական մասի վանահայր է դառնում Թեոտեկնոսը, իսկ ասորիներին առաջնորդում է Աֆթոնիոսը: Շատ չանցած՝ Թեոտեկնոսը մահանում է՝ վանահայրությունը թողնելով իր հայազգի աշակերտ Թեոդոտոսին: Ահա թե ի՛նչ է հաղորդում Թեոդորիտոս Կյուրացին վերջինիս մասին. «Իսկ այս Թեոդոտոսը՝ ծնունդով Հայքից, ճգնավորների այն խումբը տես-

վեց՝ երախ բացելով, դա հետ մեկտեղ անագրու նայելով ու չար նպատակն ազդարարելով: Եվսեբիոսը (*Մարկիանոսի աշակերտը* — Գ. Ղ.), հեղինակում կանգնած, այն անավոր տեսարանից սարսափած և, կարծելով, թե վարդապետը դրանից տեղյակ չէ, նշան էր անում՝ բղավելով ու աղերսելով փախչել: Իսկ Մարկիանոսը, սաստելով ու հրամայելով թոթափել վեներոտությունը (ֆանգի դա էլ կործանարար մի ախտ է), մատով խաչի նշանը տպավորեց, բերանով փչեց ու վաղնչական թշնամանքն ակնարկեց: Եվ օձը բերանի շնչից՝ ասես կրակից, բռնկված ու բոցակիզված, վառված եղեգի պես կտոր-կտոր եղավ» (*Théodoret de Cyr, Histoire des moines de Syrie, tome I Histoire Philothée I-XIII, Introduction, texte critique, traduction et notes par Pierre Canivet et Alice Leroy-Molinghen (Sources Chrétiennes 234), Paris, 1977* (այսուհետ՝ *Théodoret de Cyr, Histoire*), էջ 256, 258): Հավանաբար, այս կամ մի նմանօրինակ այլ հրաշապատում է աչքի առջև ունեցել Վարդան Արևելցին, երբ Հովհան Օձնեցու վարժում, փորձելով ստուգաբանել Օձուն (Ուձուն) տեղանունը, գրել է. «Եւ կամ Օձուն է որպէս և այժմ կոչի զի օձս ունի, թէպէտև հովէ տեղիին, որպէս և յաւանդ գրուցածն ասին, թէ վիշապ երկու երևեցան անդ, եթէ յայրէ ուստեմ, որ կան յանձաւս խրամին, և թէ այլ ուստեմ եկեալ ապականէին զբազում տեղիս մինչ ի խնամոյն Աստուծոյ ածեալ լինէին առ ընթեր ճգնարանի սրբոյն ընդ զառ ի կող լերինն անագին շաշմամբ սողելով, և սուրբն կայր ի խորհրդեան պատարագին, զոր տեսեալ մոնոզոնին աղաղակեաց առ նա: Իսկ նորա խաշակնմեալ ընդդէմ զտեղի առնուին, և մինչև եկեալ ի յարձակման պատարագին վիմատատեալ արձանացուցանէր զնոսա. կարծակառոյց ֆարինս, որ կան և տեսանին մինչև ցայսօր ի ձև և ի գոյն օձի ի նշան փառացն Քրիստոսի և յիշատակ առն սրբութեան» («Հառ Վարդան վարդապետի ի վերայ Յոհան Օձնեցոյ ըստ խնդրոյ Համագասպ Եպիսկոպոսի Հաղբատայ», *Արարատ*, 1888, Ժ, էջ 591): Այստեղ ուշագրավ է ոչ միայն վարժագրական թափառող սյուժեան, այլև այն, որ միջնադարյան հեղինակը հնադարյան վիշապ-ֆարերը համարում է հրաշքի արդյունք:

²⁹ Զեզմա (Զեզմա)՝ ֆաղափ Վերին կամ Հայոց Միջագետքում: Ինքը՝ Թեոդորիտոսը պատմում է ֆաղափի առաջացման պատմությունը, ըստ որի՝ պարսից Քսերքեսն արժան, հասնելով այստեղ, Եփրատն անցնելու համար նավերն իրար է կապում՝ այդպիսով կամուրջ ստեղծելով: Այդ իսկ պատճառով բնակավայրը կոչվում է Ζεύμα, որ նշանակում է «նավակամուրջ» (հմմտ. Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բաբսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Երևան, հ. 3, 1986, էջ 475-476):

ներով, սկզբում մոնթերի³⁰ հետ դասվեց՝ հնազանդվելով [մենաստանը] կառավարող մեծն Թեոտեկնոսին: Եվ քանի որ, ինչպես ասացի, Թեոտեկնոսը հեռացավ [այս կյանքից], Թեոդոտոսն ստանձնեց [վանքի] պաշտպանությունը, այնպիսի [հոգևոր] բարիքներով պայծառացավ³¹, որ համբավով գրեթե ծածկեց [իրեն] նախորդած [վանահայրերին]: Որովհետև աստվածային բաղձանքը նրան այնպիսին դարձրեց, այնպիսի և այնչափ նետերով խոցեց, որ գիշեր ու ցերեկ հոգևոր հուզմունքի արցունքներ էր թափում: Նա այնպիսի հոգևոր շնորհով էր լի, որ երբ աղոթում էր, բոլոր ներկաները լուսվածք էին համակվում ու միայն այն սրբազան բառերն էին ունկնդրում՝ այդ ունկնդրումն իսկ գերազանց աղոթք համարելով: Քանզի ո՞վ էր այնպես կարծր, որի հոգին [Թեոդոտոսի] ի սրտե արտաբերված բառերից չբոցավառվեր, նրա դաժանությունն ու անհավատությունը չփափկանար ու դեպ աստվածային բժշկությունը չառաջնորդվեր:

Այսպես օրըստօրե [հոգևոր] հարստությունն ավելացնելով ու այսպիսի բարիքներով լի անկողոպտելի գանձեր ի ցույց դնելով, քսանհինգ տարի հովվելով հոտը՝ հավելվեց իր հայրերին, ըստ Սուրբ Գրքի՝ «սնեալ ի բարուք ծերութեան»³² [վանքի կառավարման] սանձերը հանձնելով Թեոտեկնոսին, որը ծննդով իր եղբորորդին³³ էր, իսկ կենսակերպով [հոգևոր] եղբայրը³⁴:

Թեոդորիտոս Կյուրացին որոշ տեղեկություններ է հայտնում նաև Թեոտեկնոսի մասին՝ գրելով, որ «երիտասարդ ժամանակ նրան բաժին ընկավ ամեն տեսակի փիլիսոփայություն, և նա հեռացավ [այս կյանքից] իր նախնյաց փառքով»³⁵:

Այսպիսով, Թեոդորիտոսի «Աստվածասեր պատմություն» երկում կարևոր տեղեկություններ են պահպանվել երկու հայագգի և ազգակից վանահայրերի՝ Թեոդոտոսի ու Թեոտեկնոսի մասին, որոնք մեծ համբավ են վայելել՝ Վերին Միջագետքի վանականության ռազմիրաներից լինելով: Յավոք, Թեոդորիտոս Կյուրացին չի նշում նրանց կյանքի և գործունեության ճշգրիտ ժամանակահատվածը: Ամեն դեպքում, դա ապահովաբար Դ դ. երկրորդ կեսն է:

³⁰ Հեղինակն օգտագործում է ὑπήκοος բառը, որ նշանակում է «հպատակ», «լսող»: Նկատի ունի մոնթերին, այսինքն՝ նրանց, ովքեր պատրաստվում են վանական ուխտն անելուն:

³¹ Ἐκόμησεν ἀγαθοῖς. κομᾶω բառը նշանակում է «մազր երկարացնել», բույսերի պարագայում՝ «անել», «փարթամանալ»: Այստեղ գերադասեցինք թարգմանել «պայծառացավ»:

³² Հմմտ. Ծն. ԺԵ, 15:

³³ Ἀδελφιδός նշանակում է «սիրելի եղբայր»: Թեոդորիտոսի երկի բնական հրատարակության գուգահեռ ֆրանսերեն թարգմանության մեջ՝ neveu (եղբորորդի, բեռորդի):

³⁴ Théodoret de Cyr, Histoire, էջ 338, 340:

³⁵ Théodoret de Cyr, Histoire, էջ 340:

Անանուն, «Վարժ և կենցաղավարություն մեր սուրբ հայր Գրիգենտիոս արքեպիսկոպոսի» (Βίος καὶ πολιτεία τοῦ ὁσίου πατρὸς ἡμῶν Γρηγορίου ἀρχιεπισκόπου). Հայագիտության համար բացառիկ կարևորություն ունեցող այս երկն իր ամբողջության մեջ անտիպ է³⁶: Բնագիրը պահպանվել է Սինյավանքի ցր. 541 մագաղաթյա ձեռագրում՝ թվագրված 1180 թվականով: Վարքի հերոսն է Գրիգենտիոսը՝ 2 դարում Հիմյարի թագավորության մեջ (այժմյան Յեմենի տարածքը) քրիստոնեություն տարածողը: Երիտասարդ հասակում լքելով իր ծննդավայրը՝ Գրիգենտիոսը մեկնել է Արևմուտք, անցել Ակրագասով (Սիկիլիա կղզում), Միլանով, ինչից հետո իջել է Կարթագեն, ապա բարձրացել Հռոմ, հուսկ ժամանել Ավգուստոպոլիս: Դրանից հետո նա մեկնել է Ալեքսանդրիա, որտեղ Աքսումի արքա Քաղեբ էլլա Ածբեհայի խնդրանքով Ալեքսանդրիայի (ղպտի³⁷) պատրիարքը Գրիգենտիոսին ձեռնադրել է եպիսկոպոս և ուղարկել Հիմյարի մայրաքաղաք Ջաֆար (Թեֆար): Այստեղ Գրիգենտիոսը հովվել է իր բաժինը մինչև կյանքի վերջ, այսինքն՝ մոտավորապես մինչև 2 դ. 60-ական թթ.: Նրա «Վարքը», բնականաբար, գրվել է մահվանից հետո³⁷:

Վարքի այն հատվածում, որտեղ ս. Գրիգենտիոսը ժամանում է Ավգուստոպոլիս³⁸, նա հանդիպում ու ծանոթանում է հայկազուն Անդրեասի հետ: Քանի որ Ա. Վասիլևի հոգվածում այս հատվածը մասամբ է հրատարակված, մենք անհրաժեշտ ենք համարում հրապարակել ու թարգմանել ամբողջական կտորը՝ մեր տրամադրության տակ ունենալով Սինյավանքի ձեռագրի համապատասխան թվային պատճենները³⁹:

³⁶ 1908 թ. նշանավոր ռուս բյուզանդագետ Ա. Վասիլևը հրապարակել է վարքից հատվածներ՝ զուգանեո ռուսերեն թարգմանությամբ ու պատմաբանասիրական բնութագրով. տե՛ս **А. А. Васильев**, «Житие св. Григения, еп. Омиритского», *Византийский Временник*, т. 14 (1907), СПб., էջ 23-67:

³⁷ **С. А. Французов, А. А. Турилов**, «Григений», *Православная энциклопедия*, т. 12 (2006), էջ 447-448:

³⁸ Ավգուստոպոլիս ֆաղաբը գտնվում էր միջնադարյան Անոնուարիա գավառում, որի մայրաֆաղաբն էր նշանավոր Ռավեննան: Բտալիայի հյուսիսում գտնվող այս գավառում յոթ այլ ֆաղաբ և տասնվեց ամբողջ կար (տե՛ս *Hieroclis Synecdemos et notitiae graecae episcopatum: Accedunt Nili Doxapatrii Notitia patriarchatum et locorum nomina immutata, ex recognition G. Parthey*, Amsterdam: Verlag A. M. Hakkert, 1967, էջ 77-78):

³⁹ Դրանք հայթայթելու և հումարեն բնագրի վերծանության ժամանակ օգնության համար մեր երախտագիտություն ենք հայտնում հ. Անանիա արքիմանդրիտ Կրիպպասին: Նշենք, որ բնագիրն ուներ բազմաթիվ ուղղագրական ու կետադրական սխալներ, որոնք այս հրապարակման մեջ ուղղված են՝ ըստ հումարենի ընդունված կանոնների:

[50v] ΛΖ'. Περὶ τοῦ Ἀρμενίου Ἀνδρέου

Γεγονότι δὲ αὐτῷ ἐν τῇ ἀγορᾷ τῇ λεγομένη Μιλήντῳ εὗρεν ἐκεῖσε συναγωγὴ λαοῦ καὶ τοὺς πόδας κολύσας τοῦ βαδίζειν, ἔστη ὑπὸ τοῦ Ἁγίου Πνεύματος κελευσθεῖς. Καὶ ἀναβλέψας ὁρᾷ μέσον τοῦ πλήθους ἐκείνου ἄνδρα γυμνὸν μὲν τῷ σώματι, τῇ δὲ τῶν Ἀρμενίων διαλέκτῳ προσομιλοῦντα τὰ μυστήρια· καὶ γὰρ ἐξ ἐκείνου τοῦ γένους ἐχρημάτιζεν. Ὡς δὲ ὁμίλει τῇ ἰδίᾳ διαλέκτῳ τὰ περὶ κύκλῳ αὐτοῦ συνηλεγμένα πλήθῃ νουθετεῖν καὶ καθοδηγεῖν⁴⁰ εἰς τὸν φόβον τοῦ Θεοῦ, ὁ δὲ μακάριος Γρηγόριος ἴστατο μήκοθεν ποῦ γέ αὐτὸν στοχαζόμενος. Πληρώσας δὲ ἐκεῖνος τὴν πρὸς τὰ συνηλεγμένα πλήθῃ νουθεσίαν, νυγείς τὴν διάνοιαν, ἀναβλέψας κατ'ἐναντι τοῦ μακαρίου, ἶδεν αὐτὸν ἐστῶτα. Καὶ πλησθεὶς Πνεύματος Ἁγίου, φησὶν πρὸς τοὺς παρεστώτας· «Ὁ κύριός μου ὁ ἀγαπητὸς Γρηγόριος, ἀδελφοί, ὁ φίλος ὁ μελίσρυντος τοῦ Θεοῦ τοῦ Ὑψίστου, **[51r]** ὁρᾷτε ποῦ γε περὶ ἐστίν».

Καὶ ἀρξάμενος κατὰ λεπτὸν διηγ-
ήτο τὰς ἀρετὰς αὐτοῦ· «Οὗτος ἐστίν,
– φησὶν λέγων, – ὄνπερ φιλοῦσιν οἱ
Ἀπόστολοι. Οὗτος ἐστίν, – λέγων, –
ὄν ἡ μεγάλη Παρθένος καὶ Θεοτόκος
κατὰ χάριν υἱὸν ποιήσατο, ἅμα τῷ
ἡγαπημένῳ μαθητῇ. Ἄπεισιν ὁδὸν
εὐθείαν καὶ βασιλικήν, ταῖς ἐντολαῖς

[50p] ԼԵ. Հայ Անդրեասի մասին

Երբ նա «Միլինտո» կոչված ագորայում էր, այնտեղ ժողովրդի մի բազմություն գտավ և, փայլերը դանդաղեցնելով, կանգ առավ՝ Սուրբ Հոգուց հրաման ստանալով։ Եվ, վեր նայելով, այն բազմության մեջ տեսավ մերկամարմին մի տղամարդու, որ հայոց լեզվով խոսում էր խորհուրդների մասին, քանզի հենց այդ ազգից էր սերում։ Երբ նա իր լեզվով խոսում էր՝ իրեն շրջապատած բազմությանը խրատելով ու առաջնորդելով դեպի Աստծո երկյուղը, երանելի Գրիգենտիոսը հեռվում կանգնած էր՝ ինքն էլ մտածելով նրա մասին։ Իսկ նա, ավարտելով հավաքված ժողովրդին խրատելը, մոտով խոցված՝ վեր նայելով երանելուն դեմ հանդիման, տեսավ նրան կանգնած։ Եվ, Սուրբ Հոգով լցված, ներկաներին ասաց.

– Եղբայրներ, իմ սիրելի տյար Գրիգենտիոսը՝ Բարձրյալն Աստծո մեղրածոր բարեկամը **[51ա]**. տեսե՛ք, այստեղ շրջակայքում է։

Եվ սկսեց մանրամասնությամբ պատմել նրա առաքինությունները.

– Սա է, – ասում էր, – նա, որին սիրում են առաքյալները։ Սա է, – ասում էր, – որին մեծն Կույս և Աստվածածինն ըստ շնորհի որդի է դարձրել՝ սիրեցյալ աշակերտի հետ մեկտեղ։ Գնա՛ւ ուղիղ և արքայական հանապարհով՝ Տիրոջ պատվիրանների մա-

⁴⁰ Պետք է լինի նույն ժամանակվա հայերեն հենց այսպես եմք բարգմանել։

Κυρίου ἁδολεσχοῦμενος⁴¹. Ἄπεισιν ἐπὶ Ἀλεξάνδρειαν, ἄπεισιν ἐπὶ Αἰθιοπίαν, ἄπεισιν, λύχνος διάχρυσος τοῖς ἐν σκότει ἀμαρτημάτων!».

Таυτα λέγων πρὸς τὰ πλήθη, ἐξίστα πάντα. Ἐδείκνυνεν τὲ καὶ τῇ χειρὶ τὸν μακάριον καὶ ἔλεγεν· «Ὁρᾶτε, περὶ ἐκείνου φήσκω ταῦτα λέγων (...⁴²)» – ἐμφαίνον αὐτοῖς καὶ τὰ σύστημα αὐτοῦ.

Օ ճէ, ըն ծօք մեն ըկ տօն անօշտօն քոսօմիլէ տօ՛ւս ծղօլօս քերի աւտօ՛ւ, ի՛տատօ քատանօն տի՛ն ընարետօն ըկէնօս քօլիտէան, ըփ ճէ ըթէասատօ աւտօն ճակտլօճէկնօնտօն աւտօն տօ՛ւս քարէստօսին, Օճսքօճիճս ճի՛ ձլլիճս Օճօ՛ւ, ձքաքօրիքէն Օ մակարիօս ըն տի՛ ճէնիա աւտօ՛ւ.

Тѣ ἐπαύριον δὲ, ὀρθρίσαντος τοῦ δικαίου Γρηγεντίου ἐν τῷ Ναῶ τοῦ ἐπισκοπίου, παρεγένετο κακεῖνος ὄθεν ἠϋλίζετο, χάριν τοῦ προσεύξασθαι. Καὶ μετὰ τὴν ἀπολύσιν, ἐκαθέσθη ὁ μακάριος ἐν ἐνὶ τῶν σκαμνῶν τοῦ ἀναπαυθῆναι. Ἐλθὼν δὲ κακεῖνος πλησίον αὐτοῦ, ἔβαλεν αὐτῷ μετάνοιαν. Ὁ δὲ δίκαιος ἀναστὰς, ἀνησπάσατο αὐτὸν καὶ φησὶν· «Κέλευσον, ὁ κύρης, κέλευσον!».

Կա՛յ ձքօք ըփ տօ՛ւ ձէթ ըկաթէստիքսան. Ἐքերօտօ տէ աւտօն Օ մակարիօս· «Քիօթէն, ի՛ անգաքի⁴³», – քիօսին.

սին հոգալով: Նա գնում է Ալեքսանդրիա, գնում է Եթովպիա, գնում է նա՝ ոսկեգօծ աշտանակը նրանց համար, որոնք մեղքերի խավարում են:

Այս բաները բազմությամբ ասելով՝ բորոհին զարմացրեց: Ձեռքով էլ ցույց էր տալիս երանելուն ու ասում էր.

– Տեսե՛՛ք, նրա մասին եմ խոսում՝ այս բաներն ասելով (...) – նշանացի ցույց տալով նրանց երանելուն:

Իսկ Գրիգենտիոսը, մինչդեռ անծանոթ Անդրեասը ամբողջի հետ իր մասին էր խոսում, կանգնած էր՝ հասկանալով Անդրեասի առաքինի կենցաղավարությունը: Իսկ երբ երանելին տեսավ, որ Անդրեասը ներկաներին իրեն է մատնանշում, արագ փայլելով ուրիշ փողոցով, հեռացավ իր օրհանր:

Իսկ հաջորդ օրը, երբ արդար Գրիգենտիոսն առավոտը դիմավորում էր եպիսկոպոսարանի տանարում, Անդրեասն էլ այնտեղից, որտեղ բնակվում էր, եկավ աղոթելու: Եվ ժամերգության արձակումից հետո երանելին նստեց նստարաններից մեկին հանգստանալու: Անդրեասն էլ, նրա մոտ գալով, խոնարհվեց նրան: Իսկ արդար, վեր կենալով, ողջունեց նրան ու ասաց.

– Հրամայա՛, տյա՛ր, հրամայա՛:

Եվ երկուրը միասին նստեցին: Երանելին Անդրեասին հարցրեց.

– Որտեղի՞ց է սերդ, – ասաց:

⁴¹ «Գրիգենտիոսի Վարքի» այս հատվածում հղում է կատարվում Սաղմ. 118, 15. 'Են տա՛ւս ընտօլա՛ւս սօս ἁճօլէսչիճօ, որի գրաբար քարգմանությունն է. «Ի պատուիրանս հո հոգացայ»:

⁴² Հատվածը շնչված է:

⁴³ Ձեռագրում՝ *անգաքի*, ինչն անհիմաստ է և ուղղագրական սխալի հետևանք:

Օ δὲ, ἀποκριθεὶς, λέγει πρὸς αὐτὸν· «Ἀπὸ γῆς ἀνατολῶν ἐγὼ· ἐν τῷ Ναῶ τοῦ ἁγίου Γρηγορίου τοῦ ἐν Ἀρταζάτ ἦτοι ἐν Ἀρμενίᾳ τῇ Μεγάλῃ, ἐκεῖσε καὶ φυεῖς καὶ μυθεῖς καὶ τραφεῖς καὶ τὰ ἱερὰ γράμματα παιδευθεῖς, ἱερέως υἱὸς γεγονῶς».

Ἐφη πρὸς αὐτὸν ὁ δίκαιος· «Καὶ πῶς ἐνταῦθα ἐκ τηλικούτου διαστήματος κατήντησας;»

Ἐφη ἐκεῖνος· «Συνιεῖς ἀπὸ τῶν Ἀγίων Γραφῶν, ὅτι σκιά καὶ ἐνύπνιον τὰ παρόντα, συνεῖδον, κατέλιπον τὰ πάντα καὶ οὕτω, πόλεως εἰς πόλιν μεταναστεύων, τρυγῶ κἀντεύθεν τὴν τῶν σεβασμίων ἐκκλησιῶν προσκύνησιν».

[51v] Ὁ δὲ μακάριος ἔφη· «Εὐλόγητὸς ὁ Θεός, ἀδελφε! Διὰ τὸν Κύριον μνεΐαν ποίου ἐν ταῖς ἁγίαις σου δεήσεσιν καὶ ὑπὲρ ἐμοῦ».

Ἐφη πρὸς αὐτὸν ἐκεῖνος· «Διὰ τὸν Κύριον, συγχώρησόν μοι, ἀγαπητὲ τοῦ Σωτῆρος, αὐτὸς μᾶλλον ὑπὲρ ἐμοῦ, ὥς ὢν ἄξιος δοῦλος τοῦ Κυρίου, εὐχου!».

Οὕτω ὁ σὺν ἐτέρῳ διὰ τῆς ἡδύστης ταπεινοφροσύνης ἐγκελευόμενοι, τοῦ ὑπὲρ ἀλλήλων προσεύχεσθαι συνταξάμενοι ἀλλήλοις, πρὸς ἑαυτοὺς ἐπορεύθησαν».

Իսկ նա, պատասխանելով, ասաց նրան.

– Ես երկրի արևելքից եմ: Արտաշատում, որ Մեծ Հայքում է, Սուրբ Գրիգորի եկեղեցում, ահա այնտեղ եմ և՛ ծնվել, և՛ մկրտվել, և՛ սնվել, և՛ Սուրբ Գրեքը սովորել՝ փահանայի որդի լինելով:

Արդարև նրան ասաց.

– Եվ ինչպե՞ս ես այդպիսի մեծ հեռավորությունից հասել այստեղ:

Անդրեասն ասաց.

– Սուրբ Գրքից հասկանալով, որ ներկա բաները սովեր ու երազ են, գիտակցելով, լքեցի ամեն բան և այդպես, փաղափց փաղափ տեղափոխվելով, դրանից էլ օգուտ եմ փաղում՝ պատվական եկեղեցիներին խոնարհվելով:

[51բ] Իսկ երանելին ասաց.

– Օրհնյալ է Աստված, եղբայր: Հանուն Տիրոջ՝ ինձ էլ ճիշատակիր քո սուրբ աղոթքներում:

Անդրեասը նրան ասաց.

– Հանուն Տիրոջ՝ ների՛ր ինձ, սիրեցյալդ Փրկչի, ավելի շուտ դու ինձ համար աղոթիր՝ Տիրոջ արժանավոր ծառան լինելով:

Այսպես միմյանց հետ փաղցրագույն խոնարհամտությամբ պատվիրաններ փոխանակելով, մեկը մյուսին խոստանալով միմյանց համար աղոթել, ամեն մեկն իր տեղը գնաց:

Այս փոքրիկ հատվածը անգնահատելի է մի քանի առումով.

1. Անցած՝ 2024 թ. աշնանը հայ ու գերմանացի հնագետների պեղումների արդյունքում երևան բերվեց Արտաշատի կամ Խոր վիրապի հնագույն Ս. Գրիգոր եկեղեցին, որի մասին առ այսօր հայագիտական լայն շրջանակներին հայտնի

էին հայկական և արաբական աղբյուրների տեղեկությունները⁴⁴: «Սբ. Գրիգեն-տիոսի վարքը», փաստորեն, նույն եկեղեցու մասին վկայող քրիստոնեական աղբյուր է, այն էլ՝ հնուից պատկառելի կնիքով: Ընդ որում, անկախ նրանից՝ Գրիգենտիոսի հանդիպումը Անդրեասին իրական դեպք է, թե մտացածին, փաստ է, որ անանուն վարքագիրը քաջատեղյակ է եղել Հայքի հարցում:

2. Անդրեաս Արտաշատցին քարոզում է ամբոխին հայերենով, ինչը նշանակում է, որ նրան ունենդող ժողովուրդը հասկանում էր հայերեն, այսինքն՝ հայեր էին: Սրանով կարելի է փաստել, որ Զ դ. Իտալիայի Ավգուստոպոլիս քաղաքում կար հայկական համայնք⁴⁵: Սակայն հնարավոր է մեկ այլ բացատրություն ևս. կարելի է ենթադրել, որ խոսքն այստեղ լեզվախոսության շնորհի մասին է, երբ սուրբը խոսում է իր մայրենիով, իսկ նրա ունենդիրները խոսքերը հասկանում են իրենց սեփական լեզվով:

3. Անդրեաս Արտաշատցին մերկ է, ինչը թերևս հնարավորություն է տալիս նրան համարելու աղվաշ⁴⁶: Այս առումով հետաքրքիր է, որ նա հոմանուն է բյուզանդացի հռչակավոր աղվաշ Անդրեասին (Թ-Ժ դ.): Բացի այդ, ի դեմս Անդրեաս Հայի, մեր առջև է քրիստոնյա ճգնավորի մեկ այլ տեսակ՝ օտարական-ուխտագ-նացը:

⁴⁴ Դրանց համապատկեր տե՛ս Ա. Հարությունյան, *Խոր Վիրապ. պատմությունը, ձեռագրական և վիմագրական ժառանգությունը*, Երևան, 2017, էջ 27-30:

⁴⁵ Դա զարմանալի չէ, քանի որ Աննունարիայի մայրաքաղաք Ռավեննայում կար հայկական ներկայություն: Զ-է դդ. Իտալիայում հայոց ներկայության մասին տե՛ս Դ. Կазарян, «К вопросу о присутствии армянских монашествующих в Риме в середине VII века», *Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին*, Պրակ Ա. Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2021, էջ 39-54:

⁴⁶ Աղվաշ՝ խենթ (հուն. σάλος, ռուս. юродивый): Քրիստոնեության մեջ՝ հազվադեպ ճգնության կերպ, երբ մարդը, խենթ ձևանալով՝ արհամարհում է աշխարհը, ծածուկ կերպով հրաշքներ գործում ևն: Աղվաշությունը ծագել է Ասորիքում, որոշ տարածում ունեցել Բյուզանդիայում, բայց հատկապես՝ Ռուսիայում, ըստ Գ. Ֆեդոտովի՝ դառնալով ճգնակեցության ազգային ձև: Երևույթի մասին համապարփակ տե՛ս С. А. Иванов, *Блаженные похабы. Культурная история юродства*, Москва, изд. «АСТ: Corpus», 2019: Հայ իրականության մեջ աղվաշության մի եզակի դեպք կարելի է համարել Գրիգոր Նարեկացու՝ ուրբաթ օրով աղավթիներ տալակելու և դրանց հարություն տալու դրվագը՝ վկայված սրբի ծերենցյան վարժում (տե՛ս ՄՄ 7379, 353 ք): Աղվաշի մեկ այլ օրինակ էլ՝ չափազանց ուշագրավ, բերում է Գրիգոր Կամախեցին: Խոսքը Խաչատուր Կաֆայեցի աղվաշի մասին է, որը ճգնել է Կամախի շրջանում, ապա անցել Սաղմոսավանք ու վախճանվել Տաթևի վանքում, Ժէ դ. սկզբներին (տե՛ս Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցույ կամ Դարանաղցույ, հրատ. Մեսրոպ վրդ Նշանեան, Երուսաղեմ, տպ. Առաք. Աթոռոյ Ս. Յակոբեանց, 1915, էջ 496-504):

Հովհաննես Մոսքորդի (կամ Եվկրատաս) և Սոփրոնիոս, «Մարգագետին» (Λειμών)⁴⁷. Քրիստոնյա Արևելքի վարքագրական գրականության մեջ յուրահատուկ է Մոսքորդի որդի Հովհաննեսի և նրա աշակերտ ու համահեղինակ Սոփրոնիոսի (Երուսաղեմի պատրիարք 634-638 թթ.) «Մարգագետին» երկը: Հովհաննես Մոսքորդին ծնվել է 2 դ. երկրորդ կեսին, հավանաբար Դամասկոսում: Զեռնագրվել է քահանա, ապա վանական դարձել պաղեստինյան Ս. Թեոդոսի մենաստանում: Հետագայում՝ 570-580 թթ., Հովհաննեսը ճգնել է Փառանի անապատում: Դրանից հետո Սոփրոնիոս Սոփեստեսի հետ նա ձեռնարկել է իր առաջին ճամփորդությունը Եգիպտոսի վանքերով, որից հետո ևս 10 տարի ճգնել է Սինա լեռան վրա: 594 թ. Մոսքորդին ժամանել է Երուսաղեմ, իսկ 603-607 թթ. միջակայքում ճամփորդել է Պաղեստինով, Փյունիկեով ու Կիլիկիայով՝ ժրաշան մեղվի պես հավաքելով ուշագրավ պատումներ այս տարածքների ճգնավորների մասին: Պարսիկների՝ Սուրբ Երկիր ներխուժումից հետո Հովհաննեսն ու Սոփրոնիոսը մեկնել են Ալեքսանդրիա, ապա 614 թ. անցել են Կիպրոս, այնտեղից էլ՝ Հռոմ: Այստեղ Մոսքորդին ի մի է բերել իր զույգ ճամփորդությունների գրառումները՝ շարադրելով «Հոգևոր մարգագետին» երկը, որը և մեզ հասած նրա միակ գործն է⁴⁸: Մոսքորդին իր մահկանացուն կնքել է Հռոմում, 619 կամ էլ 634 թ., իսկ Սոփրոնիոսը նրա մասունքները բերել ու թաղել է Թեոդոսի վանքում⁴⁹:

«Մարգագետին» վարքագրական ժողովածուն մեզ է տրամադրում եզակի տեղեկություններ Փոքր Հայքից սերող մի քանի եկեղեցականների մասին: Դրանցից է Պաղեստինի Ս. Թեոդոսի վանքի միաբան Պատրիկը՝ Փոքր Հայքի Սեբաստուպոլիս քաղաքից⁵⁰, որին նվիրված է 95-րդ գլուխը. «Մեր հայր Թեոդոսի վանքում մի ծեր կար բնակվող՝ ծննդով Հայքի Սեբաստուպոլսից: Նրա անունն էր Պատրիկ՝ շատ ծեր (քանզի ասում էր, որ հարյուր տասներեք տարեկան է), հեզ ու հանդարտ: Արդ, այնտեղի հայրերը մեզ պատմում էին այս առաքինի ծերի

⁴⁷ Երկը հայտնի է նաև «Մարգագետնի գիրք» (Λειμωνάριον) և «Նոր Դռախա» (Νέος Παράδεισος) անվանումներով:

⁴⁸ Մոսքորդու երկի մեծ մասը հրատարակել է Մինը 1865 թ. տե՛ս PG, 87(3), 2851-3112: Նախորդ դարում առանձին հրապարակումներով լույս ընծայվեցին երկի այլ գլուխներ ևս. տե՛ս Th. Nissen, "Unbekannte Erzählungen aus dem Pratum Spirituale," BZ, 1938, Bd. 38, էջ 351-376, E. Mioni, "Il Pratum Spirituale di Giovanni Mosco," *Orientalia Christiana Periodica*, 1951, vol. 17, էջ 61-94, Ph. Pattenden, "The Text of the 'Pratum Spirituale'," *The Journal of Theological Studies*, April 1975, New Series, Vol. 26, No. 1, էջ 38-54:

⁴⁹ Հովհաննես Մոսքորդու կյանքի և գրական ժառանգության մասին համապարփակ տե՛ս C. С. Кум, «Иоанн Мосх», *Православная энциклопедия*, т. 24 (2010), էջ 451-455:

⁵⁰ Սեբաստուպոլիսը մտնում էր Առաջին Հայք նահանգի կազմի մեջ, որի մայրաքաղաքն էր Սեբաստիան:

մասին, որ նա Ավագանոն⁵¹ կինովիոն⁵² վանահայրն էր և, հրաժարվելով վանահայրությունից, երկյուղելով պատասխանատվությունից (քանզի ասում էր, որ բանական ոչխարներին հովվելը մեծ այրերի գործն է), եկավ այստեղ հպատակությամբ՝ հոգու համար այն ավելի մեծ օգուտ համարելով⁵³:

Պատրիկ Սեբաստապոլսեցու մասին Հովհաննես Մոսքորդին պատմում է նաև հաջորդ՝ 96-րդ գլխում: Նույն Թեոդոսի վանքում կար Հուլիանոս անունով մի կույր արար վանական, որը երկմտում էր՝ պե՞տք է արդյոք ընդունել Երուսաղեմի քաղկեդոնական պատրիարք Մակարին⁵⁴, թե՞ ոչ: Լուծելու համար իր տարակուսանքը, նա դիմում է Անտիոքից ոչ շատ հեռու Սքանչելի լեռան հայտնի ճգնավոր ս. Սիմեոն Սյունակյացին: Վերջինս Հուլիանոսին հորդորում է. «Ոչ հեռացիր, ո՛չ էլ ցանկացիր ինքդ քեզ բաժանել Սուրբ եկեղեցուց, քանզի մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Աստվածորդու շնորհով նա ոչ մի վատ բան չունի: Բայց սա էլ իմացիր, եղբայր, որ եթե մեկը պատարագ մատուցի ձեր կինովիոնում, այնտեղ ունեք մի ծեր՝ Պատրիկ անվամբ: Այս ծերը կանգնում է խորանից դուրս, բոլորի վերջում՝ եկեղեցու արևմտյան պատի մոտ: Նա էլ է ասում առաջադրությունից սուրբ աղոթքը, և նրա սուրբ պատարագն ընդունելի է»⁵⁵:

Հայտնի է, որ աբբա Թեոդոսի օրոք իսկ՝ Ե. երկրորդ կեսին, նրա միաբանությունը կազմված էր երեք ազգերից՝ հույներից, հայերից ու վեսսերից, որոնցից ամեն մեկը ժամերգությունը կատարում էր իր մայրենի լեզվով⁵⁶: Հովհաննես Մոսքորդու վկայությունից պարզ է դառնում, որ դրանից շուրջ մեկ դար անց՝ 9. դ. երկրորդ կեսին, աբբա Թեոդոսի վանքում՝ ի դեմս Պատրիկի, կար հայկական ներկայություն:

Հովհաննես Մոսքորդին տեղեկություններ է հայտնում նաև հայազգի աբբա Սերգիոսի մասին, որը ծառայում էր նույնանուն մեկ այլ հրաշագործ ծերի: Հա-

⁵¹ Բնագրում Ἀβάζανον. ուղղականը պիտի լինի կա՛մ Ἀβάζανος, կա՛մ Ἀβάζανον: Զի բացատվում, որ ծագում է հայերեն «ավագան» բառից:

⁵² Κοινόβιον նշանակում է «համակացարան». այսպես են կոչվում այն վանքերը, որտեղ միաբանությունն ունի ընդհանուր ունեցվածք և կանոնադրություն:

⁵³ PG 87(3), 2953.

⁵⁴ Խոսքը Մակար Բ պատրիարքի մասին է, որը գահակալել է 552 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, և հետո՝ 564-575 թթ.:

⁵⁵ PG 87(3), 2953, 2956.

⁵⁶ Գ. Ղազարեան, «Կիւրել Սկիւրապոլսեցու տեղեկութիւնները Ե.-Զ. դարերի Պաղեստինի հայ վանականների մասին», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, 2019, էջ 51-52, Գ. Казарян, «Сведения Кирилла Скифопольского об армянских монахах Палестины V-VI вв.», *Армения и восточнохристианская цивилизация – III, республиканская конференция, посвященная 70-летию со дня рождения известного армениста-кавказоведа Павла Чобаяна (1948-2017 гг.)*, Ереван, 17-18 мая, 2018, էջ 160-161:

մապատասխան տեղեկությունները ամփոփված են «Հոգևոր մարգագետին» գործի 138-րդ և 139-րդ գլուխներում.

«Սա էլ մեզ պատմեց ծերը⁵⁷. «Երբ արբա Սերգիոս անապատականը Ռուբայում⁵⁸ էր՝ Սինայից հեռանալուց հետո, այնտեղ՝ վանք ուղարկեց մի երիտասարդ վանականի, որ նա մկրտվի: Երբ մենք հարցրինք պատճառը, թե ինչու՞ պիտի նա մկրտվի, արբա Սերգիոսը՝ այս արբա Սերգիոսի սպասավորը, ասաց. «Սա եկավ ցանկանալով մնալ մեզ հետ անապատում, իսկ ես՝ որպես սպասավոր, ընդունեցի սրան՝ շատ խրատելով, որ անփորձ կերպով այսպիսի կենցաղավարություն չստանձնի: Բայց երբ իմացա նրա հակառակությունը, վերցնելով նրան՝ գնացի ծերի մոտ: Իսկ ծերը, հենց որ տեսավ սրան, նախքան իմ խոսելը, առանձին ասաց ինձ.

— Ի՞նչ է ուզում այս եղբայրը:

Ես ասացի.

— Խնդրում է մեզ հետ լինել:

Այնժամ ծերն ինձ ասաց.

— Հավատա՛, եղբայր, որ սա մկրտված չէ: Բայց տա՛ր սրան ներքինիների վանքը, որ սուրբ Հորդանանում մկրտեն:

Ես, այս խոսքի վրա ապշելով, հարցրի եղբորը՝ ո՛վ է և որտեղի՛ց: Իսկ նա ասաց, որ Արևմուտքից է, իսկ իր ծնողները հեթանոս են, ու չգիտի՝ ինքը մկրտվա՞ծ է, թե՞ ոչ: Այնժամ նրան կատեսիլի⁵⁹ ենթարկելով, մկրտեցինք սուրբ Հորդանանում, և մնաց վանքում՝ գոհանալով Աստծուց»:

Հաջորդ գլխում Մուքորդին ընթերցողին արդեն հայտնում է արբա Սերգիոսի ազգությունը. «Այս արբա Սերգիոս անապատականի մասին պատմեց մեզ արբա Սերգիոս Հայը՝ նրա աշակերտը. «Արբա Գրիգորը, որ Փառանի լավրայի վանահայրն էր, շատ էր անհանգստացնում, որ իրեն արբայի մոտ տանեմ: Արդ, մի օր նրան տարա ծերի մոտ: Իսկ ծերն այն ժամանակ Մեռյալ ծովի կողմերում էր: Արդ, հենց որ ծերը նրան տեսավ, ողջունեց նրան շատ մեծ ուրախությամբ և, ջուր բերելով՝ լվաց նրա ոտքերը և ամբողջ օրը նրա հետ խոսեց հոգու օգտի մասին: Հաջորդ օրը նրան բաց թողեց: Երբ արբա Գրիգորը հեռացավ, ծերին ասացի.

⁵⁷ Նկատի ունի նախորդ պատումի հեղինակ ոմն արբա Հովհաննեսին:

⁵⁸ Խոսքը Ռուբ-էլ-Հալի անապատի մասին է, որն զբաղեցնում է Արաբական թերակղզու հարավը և աշխարհի ամենամեծ անապատներից մեկն է:

⁵⁹ Մկրտությանը նախորդող հավատքի ուսուցանում: Հին եկեղեցում այս շրջանը տևում էր երեք տարի, որի ընթացքում մկրտությանը նախապատրաստվող անձինք՝ երախաները, սովորում էին քրիստոնեական հավատքի դրույթները և նրանց վրա պարբերաբար ընթերցվում էին դիվանալածության աղոթքները:

— Հա՛յր, գիտես՝ ես գայթակղվեցի, որ շատ եպիսկոպոսների և քահանաների և այլ ոմանց բերեցի ձեզ մոտ, և ոչ մեկի ոտքերը չվաղիր, բայց միայն Գրիգորի:

Այնժամ ծերն ինձ ասաց.

— Զավա՛կս, ես չգիտեմ, թե ո՛վ է աբբա Գրիգորը: Միայն այն գիտեմ, որ իմ քարանձավում պատրիարքին ընդունեցի: Քանզի տեսա, որ և՛ եմիփորոն էր կրում, և՛ սբ. Ավետարանն էր բռնել:

Ինչը և իրականություն դարձավ, քանի որ վեց տարի անց Աստված աբբա Գրիգորին արժանացրեց պատրիարք դառնալուն Անտիոքում, ինչպես և կանխավ տեսել էր ծերը»⁶⁰:

Բացառիկ են այն տեղեկությունները, որոնք Մոսքորդին տրամադրում է Փոքր Հայքի Կուկուսոս քաղաքի եպիսկոպոս Ադելֆիոսի մասին: Վերջինս հայտնի է Հովհան Ոսկեբերան հայրապետի կենսագրությունից, որը 404 թ., գահընկեց արվելով ու կարգալուծ հռչակվելով, աքսորվեց Երկրորդ Հայք նահանգ⁶¹ և այստեղ, հոգատար Ադելֆիոսի ու մյուս տեղացիների շրջապատում մնաց երկու տարի: Ահավասիկ ի՛նչ է ավանդում Մոսքորդին. «Ի սուրբս մեր հայր Սաբբասի վանքում գտանք աբբա Աթանասին, և նա մեզ պատմեց՝ ասելով, որ աբբա Աթենոգենեսից՝ Պետրայի եպիսկոպոսից՝ ամմա»⁶² Դամիանեի որդուց, լսել է ահա սա. «Իմ տատ Հաննիան մի եղբայր ուներ՝ անունով Ադելֆիոս, Արաբիսոսի եպիսկոպոս: Ուներ և մի քույր, որ կանանց մենաստանի վանամայր էր: Արդ, մի օր եպիսկոպոսը գնաց մենաստան՝ այցելելու իր քրոջը: Եվ երբ նա մտավ մենաստանի բակը, տեսավ քույրերից մեկին, որ տանջվում էր դեկից և գետին էր ընկած: Արդ, եպիսկոպոսն իր քրոջը կանչելով, նրան ասաց.

— Քեզ դո՛ւր է գալիս, որ այս քույրը դեկից վնաս է կրում ու խայտառակվում: Թե՞ չգիտես, որ իբրև վանամայր՝ կրում ես բոլոր քույրերի պատասխանատվությունը:

Իսկ նա պատասխանեց եպիսկոպոսին.

— Իսկ ես ի՞նչ պիտի անեմ դեկին:

Եպիսկոպոսը կրկին ասաց.

— Իսկ այստեղ դու ի՞նչ ես անում այսքան տարի:

Եվ եպիսկոպոսը, աղոթք անելով, մաքրեց քրոջը»:

Կրկին, սույն Աթանասը մեզ պատմեց նույն Ադելֆիոս եպիսկոպոսի մասին՝ ասելով, որ լսել է նրա քույր ամմա Հաննիայից, որ պատմել է. «Երբ Կոստանդ-

⁶⁰ PG 87(3), 3002-3004: Անտիոքի Գրիգոր Ա պատրիարքը զանակալել է 573-593 թթ.: Հետևաբար, նկարագրված դեպքը տեղի է ունեցել 567 թ.:

⁶¹ Նախանգի մայրաքաղաքն էր Մելիտենեն:

⁶² Ամմա՝ մայր, արական «աբբա» կոչման իգական համարժեքը:

նուպոլսի եպիսկոպոս Հովհան Ոսկեբերանն աքսորվեց Կուկուսոս, նա մեր տանն էր մնում: Արդ, դրանով մեծ համարձակություն ու սեր ունեինք առ Աստված: Արդ, իմ եղբայր Աղելֆիոսը պատմում էր. «Երբ երանելի Հովհանն աքսորում մահացավ, անտանելի վիշտ ունեի, որ այդ այրը՝ Տիեզերքի վարդապետը, որն Աստծո եկեղեցին իր խոսքերով ուրախացրեց, ննջեց իր աթոռից դուրս: Աղաչում էի Աստծուն շատ արտասուքով, որ ցույց տա ինձ նրան՝ թե ի՞նչ վիճակում է: Եվ դասվե՞ց արդյոք պատրիարքների շարքը: Երկար ժամանակ սրա մասին աղոթելով, մի օր հափշտակման մեջ լինելով՝ տեսա մի շատ բարետես այրի, որ բռնել էր աջ ձեռքս: Նա ինձ տարավ մի պայծառ ու փառավոր տեղ, ինձ ցույց տվեց բարեպաշտ քարոզիչներին ու եկեղեցու վարդապետներին: Որովհետև ես, — ասում է, — շուրջս էի նայում՝ տեսնելու ում որ բաղձում էի՝ մեծն Հովհանին՝ իմ սիրելուն: Երբ ինձ ցույց տվեց բոլորին, և մեկ առ մեկ յուրաքանչյուրի անունն ասաց, նորից ձեռքիցս բռնելով, ինձ դուրս հանեց: Իսկ ես տխրած հետևում էի նրան՝ Հայրերի մեջ չտեսնելով ի սուրբս Հովհանին: Արդ, երբ դուրս էի գալիս, դռնապանն ինձ ասաց.

— Այստեղ եկածներից ոչ ոք վշտացած դուրս չի գալիս:

Այնժամ ասացի նրան.

— Իմ վիշտն այն է, որ իմ սիրելի Հովհանին՝ Կոստանդնուպոլսի եպիսկոպոսին չտեսա մյուս վարդապետների հետ:

Իսկ նա նորից ասաց ինձ.

— Ապաշխարություն [քարոզիչ] Հովհանի՞ն ես ասում: Կենդանի մարդը չի կարող նրան տեսնել, քանզի նա կանգնած է այնտեղ, որտեղ Տիրոջ Գահն է»⁶³:

Հովհաննեա Մոսքորդու տեղեկատուն, այսպիսով, ոմն աբբա Աթանասն է, որը ծանոթ է եղել թե՛ ամմա Հաննիային, թե՛ նրա թոռնիկ, ամմա Դամիանեի որդի Աթենոգենես եպիսկոպոսին: Շատ հավանական է, որ Աթանասը նրանց համաերկրացին է եղել: Նրա պատումի մեջ թվացյալ մի անճշտություն կա. 404-407 թթ., երբ Ոսկեբերանն աքսորված էր Հայք, Աղելֆիոսը Կուկուսոսի եպիսկոպոսն էր, իսկ Արաբիսոսի եպիսկոպոսն Օտրիոսն էր, որը ևս բարեկամաբար էր հյուրընկալել հալածվող Ոսկեբերան հայրապետին⁶⁴: Աղելֆիոսը որպես Արաբիսոսի եպիսկոպոս նշված է 458 թ.⁶⁵, և Մոսքորդու տեղեկությունը, փաստորեն, թույլ է տալիս ընդունել, որ հետագայում Աղելֆիոսը Կուկուսոսից փո-

⁶³ PG 87(3), 2992, 2993:

⁶⁴ Ոսկեբերանի՝ դեպի աֆսոս ճանապարհի և աֆսոսավայրում մղձավանջային օրերի մասին մանրամասն տե՛ս Amédée S. D. Thierry, *Άγιος Ιωάννης ὁ Χρυσόστομος μεγαλομάρτυς μετὰ τοὺς διωγμούς*, Θεσσαλονίκη, εκδ. «Χριστιανική Ἑλλάς», ²2003, էջ 322-422:

⁶⁵ G. Fedalto, *Hierarchia ecclesiastica orientalis: series episcoporum Ecclesiarum christianarum orientalium*, v. 1. Patriarchatus Constantinopolitanus, Padova: “Massaggero”, 2008, էջ 42:

խաղրվել էր Արաբխոս: Անկախ նրանից՝ պատումն իրական է, թե բարեպաշտ ավանդազրույց, կարևոր է այն, թե սերունդների հիշողության մեջ ինչպե՞ս է տպավորվել Ոսկեբերանի ու նրան ջերմությամբ ընդունած Փոքր Հայքի բնակիչների կապը:

«Պատմություն մեր Տեր և Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոսի անձեռակերտ Պատկերի մասին» (Διήγησις περὶ τῆς ἀχειροποιήτου Εἰκόνοιο τοῦ Κυρίου καὶ Θεοῦ καὶ Σωτῆρος ἡμῶν Ἰησοῦ Χριστοῦ). Ուղղափառ եկեղեցու 12-հատորյա Ամսական Շարակնոցում (Μηναῖον), առավոտյան ժամերգության մեջ՝ «սինաքսարիոն» կոչվող հատվածում, պատահում են ուշագրավ, խրատական պատումներ, որոնք երբեմն զուրկ չեն պատմական արժեքից: Ահա այդպիսի մի բնագիր պահպանվել է օգոստոս ամսվա հատորում՝ ամսի 11-ի առավոտյան ժամերգության մեջ:

«Տիբերիոս արքայի օրոք մի մեծ ու տարօրինակ հրաշք տեղի ունեցավ: Մարիամ անունով մի կին՝ քրիստոսասեր մի սինկլիտիկե⁶⁶, «պատրիկուհի»⁶⁷ տիտղոսով, այրի լինելով՝ դաժան ու անբուժելի մի ախտով ցավագարվեց: Հուսալքվելով մարդկային օժանդակությունից՝ իր անձը հանձնեց մեր Աստված և Տեր Հիսուս Քրիստոսին: Արդ, մի բարի միտք հղանալով իր մեջ՝ տերունական սուրբ և անձեռակերտ Պատկերի սպասավորներին [մարդ] ուղարկեց՝ խնդրելով ժամանել իր մոտ: Երբ նրանք եկան, նրանց ոտքերն ընկավ՝ ասելով.

— Տյա՛րք իմ, աղաչում եմ ձեզ. քանի որ Աստված իմ մեղքերի պատճառով թույլ է տվել գանահարվել դաժան ու կործանարար հիվանդությունից, ես՝ եղկելիս ու անարժանս ցանկանում եմ, ձեր սուրբ աղոթքներով, քառասուն օր իմ ամենաթշվառ տանը հյուրընկալել տերունական ու սուրբ Պատկերը⁶⁸, թերևս (Աստված) նրա միջոցով ողորմություն անի ինձ:

⁶⁶ Կոստանդնուպոլսի Սինկլիտի կամ Սենատի անդամ: Բյուզանդական շրջանում սենատորները չունեին իրական իշխանություն (տե՛ս A. Kazhdan, “Senator (συγκλητικός)”, *The Oxford Dictionary of Byzantium*, New York and Oxford: Oxford University Press, 1991, էջ 1869):

⁶⁷ Ζωστή πατρικία. Բյուզանդական կայսրության մեջ կանանց տրվող միակ և բարձրագույն ազնվական կոչումը, որը տիտղոսների աստիճանակարգման մեջ գտնվում էր կյուրսպաղատի և մագիստրոսի միջև: Համարվում է, որ տիտղոսն առաջին անգամ վկայված է Թեոդորա կայսրուհու (Թ դ.) մոտ՝ Թեոկտիստեի պարագայում (տե՛ս A. Kazhdan, “Zoste patrikia”, *The Oxford Dictionary of Byzantium*, 1991, էջ 2231), այնպես որ մեր բնագրում այս տիտղոսը կա՛մ ժամանակավրեպ է, կա՛մ տիտղոսի կիրառության առաջին դեպքը, որ բյուզանդագետներին պարզապես անհայտ է մնացել:

⁶⁸ Բնագրում անձառակերտ պատկերի համար կիրառվում է χαράκτηρ բառը, որ նշանակում է «դաշվածք», «տիպ», «կնիք», «պատկեր», «բնութագիր» ևն:

Իմանալով նրա կենցաղավարությունն ու հոգևոր վիճակը, նրանք բերեցին սուրբ Պատկերը, և երբ բացեցին տապանակը, կինը երկրպագեց ու համբուրեց (Պատկերը): Եվ հավասարաչափ բամբակյա մի կտոր վերցնելով՝ դրեց սուրբ Պատկերի վրա: Ապա, դնելով մի մաքուր տապանակի մեջ, խնամքով պահում էր այն: Եվ ի պահեստի դնելով իր աղոթատանը, պաշտառապես լուսավորում էր⁶⁹ քառասուն օր շարունակ պատարագ մատուցելով:

Երբ քառասուն օրերը լրացան, կնոջ ցավերն սկսեցին դառնալ սաստիկ ու անտանելի այն աստիճան, որ անգամ անկողնուց չէր կարողանում վեր կենալ: Կանչելով աղախիններից մեկին, որի մասին գիտեր, որ ամենամաքուրն է, ասաց նրան.

— Բե՛ր սուրբ Պատկերի տապանակը, որպեսզի երկրպագեմ ու մի փոքր հանգիստ գտնեմ ինձ բռնած սաստիկ ցավից:

Իսկ աղախինը, աղոթատուն գնալով, մեծ, ահավոր ու տարօրինակ հրաշք տեսավ. հրո հսկայական մի բոց, այն սուրբ տապանակից բարձրանալով, հասնում էր մինչև առաստաղը և, պարուրելով սուրբ սեղանը, հասնում էր մինչև հատակը՝ սուրբ սեղանն ամբողջությամբ անկեզ պահելով: Աղախինը, ապշահար լինելով, երեսնիվայր ընկավ: Հետո, վազելով, ազդարարեց իր տիկնոջը: Իսկ նա, սարսռելով, իջավ մահճակալից և մի կերպ գնալով դեպի աղոթատունը ու տեսնելով բոցը, գոչեց.

— Տե՛ր, ողորմյա՛:

Ապա փութով կանչեց սպասավորներին: Նրանց հետեց մեծ բազմություն, և բոլորը, տարօրինակ հրաշքը տեսնելով, ապշեցին: Երբ բոցը վեր էր բարձրանում ու ներքև իջնում՝ սաստիկ քամուց քշվող առագաստի նման, երկար ժամանակ բոլորը գոչում էին՝ Տե՛ր ողորմյա՛: Երբ քահանաներն աղոթեցին, բոցն իջավ: Բացելով տապանակը՝ տերունական սուրբ և անձեռագործ Պատկերն անվթար ու անվնաս գտան: Վերցնելով նաև բամբակյա կտորը, որը դրել էր պատրիկուհին, դրանում գտան տերունական մեկ այլ անձեռագործ Պատկեր. օ՛, սքանչելի՛ք՝ նման սկզբնապատկերին: Դրա համար բոլորը, փառավորելով Աստծուն և այն համբուրելով, դրեցին կնոջ ցավի վրա: Եվ իսկույն ցավերը դադարեցին, ախտը փախավ, ու կինը բժշկվեց: Եվ, լիովին ապաքինվելով, վեր կացավ փառավորելով Աստծուն՝ քահանաների հետ եկած բոլոր մարդկանց հետ միասին:

Տարիներ անց այն պատվականագույն կինը (ընտրության անոթ լինելով), քանի որ նախապես տեղեկացել էր այս կյանքից իր փոխվելու մասին, հոգ տարավ, որպեսզի այս սուրբ Պատկերը հանձնի Մելիտենեում գտնվող Ս. Համբարձում վանքին: Երբ ասես մի առաքելությամբ այնտեղ հասավ Մելիտենեի արքե-

⁶⁹ Այսինքն՝ տապանակի առջև մեծ կանթեղ էր վառել:

պիսկոպոս Դոմեստիանոսը՝ Մավրիկիոս արքայի զարմիկը, նույն քաղաքի գլխավորների հետ միասին այդ մասին իմացավ պատրիկիան և սուրբ Պատկերը հանձնեց արքեպիսկոպոսին՝ ասելով իր նպատակը, որի պատճառով (Պատկերը) Մելիտենե տարվեց:

Զարժե զանց առնել և երկրորդ հրաշքը. երբ Հերակլ արքայի օրոք տեղի ունեցավ պարսից արշավանքը, վանքի միանձնուհիները, վախով բռնված՝ միգուցե և իրենք գերեվարվեն, գնացին Կոստանդնուպոլիս, և ազնվատոհմիկներից լինելով, մի վանք ստացան Սերգիոս պատրիարքից: Վերջինս, տեղեկանալով այս սուրբ և անձեռագործ Պատկերի մասին, միանձնուհիների կամքին հակառակ խլեց այն: Սակայն նրա վրա իրարահաջորդ վշտեր եկան այն օրերին. արքաների դժգոհությունը⁷⁰ նրա հանդեպ, եկեղեցու զանազան խռովությունները: Սրանց միջով անցնելով գիշերը մի զարհուրելի այր է տեսնում, որ կանգնում ու ասում է իրեն.

— Վերադարձրու՜ ինչը որ արագ ու անարդար կերպով վերցրեցիր վանքից:

Վեր կենալով՝ մտորում էր: Եվ իր յուրայիններին կանչելով՝ հարցուփորձ էր անում.

— Ի՞նչ են այս վշտերը, և ի՞նչ պատճառով եմ դրանց ենթարկվում: Մանավանդ որ գիշերը մի ահավոր այր տեսա, որ կանգնած ասում էր ինձ. «Վերադարձրու՜ արագ այն, ինչն անարդար կերպով խլեցիր վանքից»: Ումից ի՞նչ ենք խլել՝ չենք հասկանում:

Իսկ նրանք ասացին.

— Տե՛ր, բնավ մի՛ մտածիր դրա մասին. երբևիցե որևէ մեկին չես էլ զրկել, այլ դիվաց ներգործություն արդյունքն են թե՛ վշտերը, թե՛ երազները:

Ապա նորից գիշեր է գալիս: Եվ նորից հայտնվելով այն ահավորը՝ ասում է նրան խստություն.

— Արա՛գ վերադարձրու այն, ինչը խլեցիր Համբարձման միանձնուհիներից: Եվ չգիտե՞ս, որ օտարական են ու անմխիթար՝ օտար երկիր գալով:

Զարթնելով ասում է իր սենեկապետին.

— Եղբայ՛ր, երբ Տերունական Պատկերը միանձնուհիներից վերցրիր, ինչպե՞ս դրան վերաբերվեցին:

Իսկ նա ասաց.

— Շա՛տ ծանր, տե՛ր: Ու եթե կարողանային, կհակառակվեին մեզ:

Այնժամ պատրիարքը հասկացավ իր անձը կշտամբելով: Եվ մեծ պատվով ու փութով սուրբ Պատկերն ուղարկեց միանձնուհիների վանքը, նույնների 29-ին: Պատրիարքի փորձություններն ու վշտերն էլ դադարեցին, միանձնուհի-

⁷⁰ Նկատի ունի Հերակլին ու նրա ավագ որդուն՝ Կոստանդին Գ-ին, որը կայսերակից էր 613 թ. սկսյալ: Հերակլի նույնամուն կրտսեր որդին կայսերակից հռչակվեց շատ ավելի ուշ՝ 638 թ.:

ներն էլ ուրախացան՝ աստվածային Պատկերի անասելի ուրախությունը վայելելով»⁷¹:

Մեջբերված հրաշապատումը թերևս սեղմագիրն է ավելի մանրամասն մի բնագրի, որը կարելի է թվագրել է դ. երկրորդ կեսով: Մասնավորապես, հուշարձանի երրորդ հատվածում հիշատակված Կոստանդնուպոլսի Սերգիոս (Սարգիս) Ա պատրիարքը գահակալել է 610-638 թթ.: Ուստի, ըստ մեզ՝ հուշարձանը կարելի է թվագրել 639 թ. մինչև 681 թ. ընկած ժամանակահատվածով, որովհետև 681 թ. հրավիրված 2 Տիեզերաժողովում Սերգիոսը հետմահու բանադրվեց՝ որպես միակամական: Մինչդեռ քննվող բնագրում պատրիարքը դավանական առումով չեզոք է ներկայացված, ավելին՝ ասվում է, որ անձեռակերտ Պատկերը մեկտեսնեցի միանձնուհիներին վերադարձնելուց հետո նրա վշտերը դադարեցին: Ինչ վերաբերում է բնագրի ներքին ժամանակագրությանը, ապա այն բաղկացած է երեք կտորից, որոնցից առաջինը թվագրվում է Տիբերիոս Ա (578-582 թթ.), երկրորդը Մավրիկիոս կամ Մորիկ (582-602 թթ.), իսկ երրորդը՝ Հերակլ (610-641 թթ.) կայսրերի գահակալման ժամանակներով: Թեպետ առաջին ու երկրորդ դրվագների տեղագրությունը նշված չէ, սակայն միանշանակ է, որ դեպքերը տեղի են ունենում եղեսիայում, որտեղ պահվում էր Փրկչի Անձեռագործ դաստառակը: Հավելյալ պատմական տեղեկությունների վրա հիմնվելով՝ կարելի է ավելի ստույգ թվագրել պատմվող իրադարձությունները՝ ըստ այսմ.

ա) Մավրիկ կայսեր ազգական, Մելիտենեի արքեպիսկոպոս Դոմեստիանոսը, լինելով կայսեր վստահված անձը, հիմնականում բնակվել է արքունիքում: Նա Արևելք է եկել երկու անգամ:

— 585 թ. Դոմեստիանոսը մեկնել է Վերին Ասորիք՝ պարսից արքա Խոսրովի մոտ, որին իբրև կայսեր ներկայացուցիչ ուղեկցել է մինչև բյուզանդա-պարսկական սահման: Մելիտենեի արքեպիսկոպոսը արևելյան գավառներում է մնացել մինչև 591 թ. և այս ընթացքում իրականացրել է նաև աշխարհիկ իշխանության գործառույթներ:

— 598 թ. վերջում Դոմեստիանոսը կրկին եկել է Միջագետք ու Մելիտենե, որտեղ, ըստ ասորական և եգիպտական աղբյուրների՝ դաժան հալածանք է հարուցել հակոբիկյան ասորիների դեմ: Ըստ Միքայել Ասորու՝ Դոմեստիանոս Մելիտենեցին, 601 թ. ժամանելով եղեսիա, մարտի 10-ին մահապատժի է ենթարկել այստեղի ասորի վանականներին՝ Քաղկեդոնի տիեզերաժողովը չընդունելու համար:

Արդ, Մարիամ պատրիկուհու և Դոմեստիանոսի հանդիպումն ու անձեռագործ պատկերը նրան հանձնելը տեղի է ունեցել կա՛մ 585-591 թթ., կա՛մ 598-

⁷¹ Μηναιον τοῦ Αὐγούστου, περιέχουσα ἅπασαν τὴν ἀνηκουσαν αὐτῷ ἀκολουθίαν, Αθῆνα, εκδ. της Αποστολικῆς Διακονίας της Εκκλησίας της Ελλάδος ² 2002, էջ 152-154:

601 թթ., երբ հատուկ լիազորություններով օժտված Դոմեստիանոսը գտնվում էր կայսրության արևելյան հողերում⁷²:

բ) Բնագրում ակնարկ կա Սերգիոս պատրիարքի և Հերակլ կայսեր միջև լարված հարաբերությունների մասին: Այդպիսի դրվագ իսկապես եղել է, երբ Հերակլը որոշել է ամուսնանալ իր քրոջ դստեր՝ Մարտինայի հետ: Սկզբում Սերգիոս պատրիարքը նրան խստորեն կշտամբել է այդ հակականոնական ամուսնության համար, բայց հետո ստիպված համակերպվել է⁷³: Բյուզանդագետներն այս ամուսնությունը թվագրում են կամ 613, կամ էլ 623 թվականով⁷⁴: Հստակ դժ, մեկիտենեցի միանձնուհիների գաղթը Կոստանդնուպոլիս կարելի է թվագրել վերոնշյալ թվականներին մոտ ժամանակահատվածով: Բացի այդ, հետաքրքրական է, որ Մեկիտենեի անձեռագործ պատկերը շատ շուտով դառնում է կայսրության մայրաքաղաքի գլխավոր սրբություններից մեկը. այսպես, բյուզանդական մի ժամանակագրության մեջ, որտեղ պատմվում է 626 թ. ավարների կողմից Կոստանդնուպոլսի պաշարման մասին, ավանդվում է, որ Սերգիոս պատրիարքը քաղաքի պարիսպներով շրջում էր աղոթքով ու սրբություններով՝ հաշափայտի մասունքներով, Տիրամոր սրբապատկերով ու Հանդերձով, ինչպես նաև «մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի անձեռակերտ Տիպով»⁷⁵: Հստակ է, որ այստեղ խոսքը Մեկիտենեի անձեռագործ պատկերի մասին է, քանի որ եղեսիայի Անձեռագործ Դաստառակը Կոստանդնուպոլիս տեղափոխվեց շատ ավելի ուշ՝ 944 թ.:

Բացի ուշագրավ պատմական մանրամասներից, սույն հատվածն արժեքավոր է նրանով, որ ևս մեկ պատկեր է ավելացնում Քրիստոսի անձեռակերտ պատկերների շարքում⁷⁶: Ավելին, եթե եղեսիայի Անձեռակերտ Դաստառակի պատճենները ձեռագործ են, ապա Մեկիտենեի պատկերը (ինչպես և զույգ Կղմինդրները), առաջացել է գերբնական արտասպան արդյունքում:

⁷² Դոմեստիանոս Մեկիտենեցու մասին տե՛ս **М. В. Грацианский**, «Дометриан», *Православная энциклопедия*, т. 15 (2007), էջ 602-603:

⁷³ **Μ. Ι. Γεδεών**, *Πατριαρχικοί Πίνακες: Ειδήσεις ιστορικοί βιογραφικοί περί τῶν Πατριαρχῶν Κωνσταντινουπόλεως ἀπὸ Ἀνδρέου τοῦ Προτοκλήτου μέχρι Ἰωακείμ Γ' του ἀπὸ Θεσσαλονίκης*, 36-1884, ἐν Κωνσταντινουπόλει, 1885-1890, էջ 442:

⁷⁴ **Χρονόπουλος Γ. Κ.**, *Ηράκλειος, Βυζαντινοί αυτοκράτορες-στρατηγοί*, τ. Γ', Αθήνα, 2017, էջ 42:

⁷⁵ **PG** 106, 1340.

⁷⁶ **Մրանց մասին տե՛ս Դ. Α. Σωτηρίου**, *Ὁ Χριστός ἐν τῇ τέχνῃ*, ἐν Αθήναις, 1914, էջ 27-55. «Կոնստանդին Միքանադինի շարադրանքը Քրիստոսի անձեռագործ պատկերի մասին» (*Narratio de imagine Edessena*), **Օտար աղբյուրներ Հայաստանի և հայերի մասին, հ. 6. Բյուզանդական աղբյուրներ, հ. Բ: Կոնստանդին Միքանադին**, հատորի խմբ.՝ Ս. Մ. Կրկյաշարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստ., 1970, էջ 175-194, **А. Лидов**, *Иеротопия. Пространственные иконы и образы парадигмы в византийской культуре*, Москва: «Дизайн. Информация. Картография», 2009, էջ 109-160:

Այսպիսով, ներկայացված վարքագրական հուշարձանները կարևոր են մի քանի առումներով. նախ, դրանք երևան են հանում հայազգի սրբակյաց անձանց անուններ, որոնք, կարելի է ասել, գրեթե անհայտ են մնացել քրիստոնյա աշխարհին: Երկրորդ, մեզ համար կարևոր են Փոքր Հայքին վերաբերող տեղեկությունները, քանի որ այս երկրամասը հայ միջնադարյան պատմագրության մեջ համեմատաբար նվազ է լուսաբանված: Նշված բոլոր վարքագրական աղբյուրներն էլ անգնահատելի են հատկապես հայոց Սիյուռքի ուսումնասիրության տեսանկյունից, քանի որ ուրվագծում են Հայրենիքից դուրս ապրած հայ սրբերի լայն աշխարհագրություն՝ Միջագետքից ու Պաղեստինից մինչև Կոստանդնուպոլիս և Իտալիա: Եվ վերջապես, այս հուշարձաններում արտացոլված է օտարների կարծիքը քրիստոնյա հայի մասին, ինչը՝ զերծ որևիցէ ազգային սնապարծությունից, պիտի օգնի վերագնահատելու մեզ, ոտքի կանգնելու և շարժվելու առաջ...

GEVORG KAZARYAN

GREEK HAGIOLOGICAL SOURCES OF V-VII CENTURIES ABOUT ARMENIA AND ARMENIANS

Keywords: Lives of the Saints, hagiology, monasticism, Armenian monks, Lesser Armenia, Theodoret of Cyrus, St. Gregentius, Khor Virap, John Moschus, John Chrysostom, Image of Edessa, Mandyllion

This article, presents five Greek hagiographical sources from the 5th to 7th centuries translated into Armenian that provide valuable insights into Armenia and the Armenians.

The *Life of St. Hypatius* (5th century) features an Armenian abbot, Ionah, a former warrior who abandoned his military career to become a hermit. Ionah later founded the Monastery of Almirissos in Thrace and actively spread Christianity in the region, effectively becoming its enlightener. Theodoret of Cyrus's *A History of the Monks of Syria* (5th century) and John Moschus's *Spiritual Meadow* (7th century) offer remarkable accounts of Armenian ascetics and monks in Lesser Armenia, Northern Mesopotamia, and the Holy Land. The *Life of St. Gregentius* (7th century) provides invaluable testimony about the earliest known church dedicated to St. Gregory the Illuminator of Armenia in Artashat (Khor Virap). Finally, the

Narrative of the Unwrought Image of the Saviour, found in the *Monthly Menaion* and dating back to the 7th century, preserves unique information about the Unwrought Mandylion of Melitene, miraculously imprinted from the Image of Edessa.

ГЕВОРГ КАЗАРЯН

ГРЕЧЕСКИЕ АГИОГРАФИЧЕСКИЕ ИСТОЧНИКИ V-VII ВЕКОВ
ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ

Ключевые слова: Жития Святых, агиология, монашество, армянские монахи, Малая Армения, Феодорит Кирский, святой Григений, Хор Вирап, Иоанн Мосх, Иоанн Златоуст, Нерукотворный Убрус

В данной статье в переводе на армянский, представляются пять агиологических источников на греческом языке, датируемых V-VII вв., в которых приводятся ценные сведения об Армении и армянах. Так, в “Житии преп. Ипатия” (V в.) мы встречаем армянина авву Иону, бывшего воина, отказавшегося от воинской карьеры и ставшего пустынником. Преподобный Иона стал основателем монастыря Алмириссос во Фракии и активно распространял там христианство, фактически став просветителем края. В “Истории боголюбцев” Феодорита Кирского (V в.) и в “Лимонаре” («Луге духовном») Иоанна Мосха (VII в.) содержатся примечательные сведения об армянских подвижниках благочестия и монахов Малой Армении, Северной Месопотамии и Святой Земли. В житии св. Григения (VII в.) содержится неоценимое свидетельство о древнейшем храме св. Григория, Просветителя Армении в Арташате (Хор Вирап). И наконец, в “Повествовании о Нерукотворном Образе Спасителя” (вероятно, VII в.), которое содержится в Минее месячной, сохранились уникальные сведения о Мелитинском Нерукотворном Убрусе, чудесным образом отпечатленном с едесского Мандилиона.